45ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 988 — Կ. ՊՈԼԻՍ — ՇԱԲԱԹ (11)24 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1911 — 14 ՐԵԺԱՊ 1322 — 11 ԵԼՈՒԼ 1326

Journal Arménien
MANZOUMÉ-I-EFKIAR
Grand' Rue de la S-Porte.
CONSTANTINOPLE

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Տ. ԳԱՅԼԵՐԵԱՆ
ՏՊՈՒ ԿՈՒՆԴՈՒՐԱ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՏՊՈՒԹԻՒՆ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
36, Բ. Բ. Ալի Փողոց, 38

# Մանզումէի Էֆքեար

## ՀԱՑԱՒՍԵՐՍ ՍԱԶԻՕՅԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

منظومهٔ افكار

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
| | Տարեկան | Վեցամսեայ |
|---|---|---|
| Պոլսոյ համար | 80 | 50 |
| Գաւառներու համար | 108 | 60 |
| Արտասահմանի համար | 25 Ֆր. | 13 Ֆր. |

10 ՓԱՐԱ — ՎԱՅՆԱԳԻՐ "ՄԱՆԶՈՒՄԷ„ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ — 10 ՓԱՐԱ


ՕՐՈՒԱՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

# ԿԻՆՆ Է ՈՐ ԿԱԶՄԱԿԱՆԷ ԿԻՆԸ

Կիները յարգել, հաւաքոյթներու մէջ նախապատուութիւն տալ անոնց, նեղ պարագաներու պահուն օգնել, և նոյն իսկ ծպտարկել տիկիններուն։ Այս է քաղաքակրթութեան և մարդկութեան ընդհանուր պահանջը, որուն անթերի խղճմտութեամբ կը հետեւին կենցաղագէտ յորջորջուած անձինք ու զիրար գերազանցելու ճիգեր կ'ընեն, երբ խնդիրը գեղեցիկ սեռին ծառայութիւն մը մատուցանելու և կամ տիկնոջ մը ու օրիորդի մը հաճելի երեւալու վրայ ըլլայ։ Ասիկայ ընդհանուր օրէնք դարձած է ամէն քաղաքակիրթ երկիրներու մէջ, ուր կինը միշտ նախադաս նկատուած է էրիկ մարդէն և նոյն իսկ դատական իշխանութիւններն ալ նկատողութեան առնելով կիներու փխրադասութեան պարագան, գեղեցիկ սեռին դէմ նախատական արարք մը գործող այր մարդը կը պատժեն կրկնապատիկ չափով։

Էրիկ մարդոց կողմէ կիներուն ընծայուած այս մենաշնորհը սակայն քաղաքավարական կամ պարտականութիւն մը կամ անոնց գեղեցկութեան նուիրուած պաշտում մը չէ միայն. այրերը այս զոհողութիւնները կ'ընեն որպէս զի կիները միշտ այն բարոյական բարձրութեան վրայ, ուր երբ օրինակելի ամուսին, սիրտ մայր, կամ մեծ մայր, չնորհալի քոյր կամ նշանած, երջանկութիւն սփռեն ընտանեկան յարկին մէջ ու քաղցրացնեն տառապանքի կեանքը, զոր էրիկմարդը ստիպուած է վարել օրն ի բուն, ճակատին քրտինքովը հացը ճարած պահուն կեանքի պայքարին մէջ։

Այս է կիներէն սպասուած փոխարինութիւնը և կնոջական խնդիրներու նկատմամբ ձեռնհաս փորձառութիւն ունեցող մեծ բանաստեղծը՝ Սողոմոն, բարոյական այս բարձրութեան վրայ գտնուող կիներուն հասցէին միայն ըսած է թէ ժրագլուխ կինը էրկանը պսակն է։

Կինը այն ատեն միայն կին է երբ չէ ինկած, երբ ապականարար խորհուրդներ սիրտը չեն պղտորած և երբ ուշադրութիւնը ամուսինէն, զաւակներէն ու ընտանիքէն դուրս չէ լարուած։ Կին չէ՛, հրեշտակ մըն է այնպիսին որ ամէն բան ամուսինէն կը սպասէ. անոր համար աշխարհի ամէնէն զարգացած, ամէնէն հարուստ, ամէնէն գեղեցիկ ու ամէնէն նախանձելի մարդը իր ամուսինն է, որուն կը հիանայ և շարունակ անոր հաճելի ըլլալու միջոցներուն վրայ կը խորհի։ Մազը ամուսնին ճաշակովը կը յարդարէ ու շրջազգեստները անոր նախասիրած գոյներէն կ'ընտրէ, անունն իսկ բերան չառներ այն միջոցին որ հաճելի չէ ամուսնոյն և չգտնուիր այնպիսի ընթացքի մը մէջ ուրկէ դժգոհ մնայ էրիկը։ Առտուն կանուխ կ'արթննայ և եթէ սպասաւորներ ալ ունի, իր իսկ ձեռքով կը պատրաստէ ամուսնոյն սուրճը՝ միշտ նկատողութեան առնելով անոր ճաշակն ու գոհացումը. իրիկուան կը հագուի վայելչօրէն ու անձկութեամբ կը սպասէ ամուսնոյն վերադարձին, զոր կը բարեւէ ժպտադէմ՝ շրջապատուած իր փոքրիկներովը։

Ըսէք, սանկ կին մը ունեցողը երջանիկ չէ՞ կատարելապէս. ալ ինչ ազդեցութիւն կրնան ընել այս բարեբախտ ամուսնոյն վրայ չունկայի վաղանցիկ մտմտուքները։ Կնոջը մէկ ժպիտը, զաւկըներուն մէկ ճռուողը, փոքրիկներուն մէկ համբոյրը կը մոռցնէ ամէն հոգ ու անմիջական զուարթութիւնով մը կ'ողողէ սիրտն ու կը լուսաւորէ միտքը բարեբաստ ընտանիքին երջանիկ հօրը՝ որ տան մէջ բոլորովին կազդուրուած, հետեւեալ առտուն նոր ոյժերով կը փարի գործին։ Եւ հանդարտ մտքով ու անդորր սրտով կառավարուած գործ մը հազուադէպ է որ սայթաքի, որովհետեւ գործին վարիչը շրջապատող իրերը հեռու կը վանեն անոր սրտէն տխրութիւնն ու մելամաղձոտութիւնը։ Միշտ զուարթ տրամադրութեան տակ կը գտնուի մարդը, զուարթօրէն կ'ընդունի յաճախորդները և այնչափ սիրած ու պաշտած կնկանն ու զաւկըներուն ապրուստ մատակարարելու պէտքը կ'ստիպէ զինք յաճախորդին սիրտը շահելու և անպատճառ բան մը ծախելու։

Ասիկայ բացայայտ ճշմարտութիւն է. ընտանեկան կեանքը մեծապէս կը նպաստէ առեւտրական կեանքին վրայ և ամուսնական երջանկութիւն վայելող էրիկ մարդիկ միշտ նուազ ցասկոտ, նուազ դիւրագրգիռ ըլլալով՝ բնականաբար ազատ մտքով կրնան առաջ վարել իրենց զբաղումը։

Արդ, այսչափ բարիքներու աղբիւր եղող տանտիկին մը համար չա՞տ է երբ ամէն մարդ յարգէ զայն, երբ հանրակառքին մէջ տեղ չգտնուի՝ էրիկ մարդ մը ելլայ ու իր տեղը հրամցնէ անոր, երբ էրիկը վերարկուն թեւին վրայ բռնած՝ օգնէ կնկանը՝ անոր ճամբորդած պահուն։ Այո՛, քաղաքակրթութիւնը կը պահանջէ յարգել կիները, բայց այս դասակարգի հրեշտակ կիները միայն, որոնց բարի սրտին ու առաքինի կենցաղին շնորհիւ ամբողջ ընտանիք

«ՄԱՆԶՈՒՄԷ»Ի ԹԵՐԹՕՆԸ 171

—Չէք կրնար սակէ մեկնիլ, ըսաւ, մինչեւ որ բացատրութիւն մը չտաք ձեր գրպանի լուսանկարին նկատմամբ.

ան հոգի կուտ[ե]ն կառելու։ Առհասարակ ենթադրուեցաւ թէ Բորթ Արթուրի Ռուս Նաւախումբը, անցեալ ամսուան մեծ ելքին անյաջողութենէն վերջ, կռուելու անկարող վիճակի մատնուած էր։ Այն մարտանաւերը որոնք անկարող եղան ընկերանալու Սեզարեվիչին և անոր ընկերներուն դէպի բաց ծովը և չէզոք նաւահանգիստները, ենթադրուեցան թէ բոլորովին քայքայեալ վիճակով մը ետ դարձան, և անանկ պատմութիւններ լսեցինք իբր թէ անոնց քայքայումը անկարկատելի էր, և անյոյս վիճակի մէջ ինկած են ներքին նաւահանգիստը՝ ճափոնական մարտկոցներուն կրակին նշաւակ եղած։ Բայց ռուս մարտանաւերուն կենսականութիւնը, այսինքն անոնց աշխուժութիւնը հաւասար է միայն գործողութեան միջոցին անոնց ցոյց տուած անզօրութեան։ Իբրեւ կռուող ուժեր, մէկ-երկու բացառութեամբ, …

…

# ՊԱՏԵՐԱԶՄԸ

## ՄԵԾ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

### ԴԵՌՅՏԻ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Վիեննայի վերջին թղթաբերով առնուած Եւրոպական թերթերէն։ Դէպքերը պատմուած իրենց կանոնաւորութեամբ եւ ծառունակաբար։)

Զօրավար Սթէօսէլ Նիքոլա կայսեր ուղղեց հետեւեալ հեռագիրները. — 10 Սեպտ. — Թշնամին կը շարունակէ բերդերուն, մարտկոցներուն և ներքին բերդաքաղաքին ռմբակոծութիւնը. առանց մինչեւ հիմա մեծ վնաս մը պատճառելու անոնց։ Վիրաւորները իրենց դիւցազնութիւնը ա՛յնքան առաջ կը տանին որ հազիւ թէ կը բուժուին, …

…

… բորդ յառաջխաղացութեան սկսելէ առաջ։ Մարէշալ Օեամա որոշած է իր ոյժը չվատնել, մինչեւ որ ի վիճակի ըլլայ մեծ և թերեւս ջախջախիչ հարուած մը տալու։

…

… հայրերը և իրօք զինուորական յատկութիւն ունեցող մարդիկը միայն զինուորագրել։ Հրամայած է նաեւ գաւառներուն մէջ մասնախումբեր կազմել՝ Պատերազմի գացողներուն ընտանեկան պէտքերուն նպաստելու համար։ Ռուս մասնագէտ սպաներ կը հակառակին զօրաբանակներուն մի միայն պահեստիներէ կազմուելու գաղափարին։ Կը յայտարարեն թէ այդ մարդիկը մեծ մասամբ մոռցած են իրենց ատկէց առաջ ընդունած զինուորական կրթութիւնը։ Միւս կողմէ կառավարութիւնը չուզեր Ծ. Արեւելքի հեռաւոր ռազմադաշտերը ղրկել բոլոր կանոնաւորները. բայց հարկ պիտի ըլլայ ղրկել, քանի որ ժամանակ չկայ նորահաւաքներուն կրթութիւն տալու։

*** Թոքիօ բնակող Եւրոպացի կարեւոր անձնաւորութիւն մը, որ Ճափոնի ժողովուրդին ներքին վիճակը դատելու կարող է, Եւրոպա դառնալով կը յայտարարէ թէ Ճափոնի ներքին կացութիւնը լաւ չէ, և արդի ճիգերը չեն կրնար երկար ժամանակ շարունակուիլ առանց վտանգի։ Բեքին օտար զինուորական կցորդները կը տեղեկագրեն թէ Ճափոն շատ տխրում բանեցուց Բեքինի կառավարութեան մօտ, որպէսզի Չինացիք գրաւուած …

…

… հետ Հոլանտայի յարաբերութիւնները բարեկամական են։ Ծ. Արեւելքի մէջ պատերազմի առեն Հոլանտա չէզոքութիւն յայտարարեց։ Բայց վաճառականութեան և շոգենաւային հաղորդակցութեանց վիճակը անգոհացուցիչ է։ Հոլանտայի ելմտական կացութիւնն ալ նոր ուժերու կը կարօտի։

# ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

## ՌՈՒՍԻԱ ԵՒ ՃԱՓՈՆ

### ՊԱՏԵՐԱԶՄ

#### «ՔՈՒՐՈՊԱԹՔԻՆ» ԱՄՐՈՑԸ ԳՐԱՒՈՒԱԾ

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ, Սեպտ. 22. — Զօր. Քուրոբաթքին ամսոյս 21ին կը հեռագրէ Զարին. — Ո և է փոփոխութիւն չկայ մեր բանակին հարաւային ճակտին վրայ։ Ամսոյս 20ին Տալինի (Դալին) կիրճին մէջ մեր զօրագունդին ունեցած կառուին վրայ ինձ հասած տեղեկագիրները կ'ըսեն թէ թշնամին, որ երկիցս յարձակողականի սկսած էր, ամէն կողմէ ետ մղուեցաւ մեծ կորուստներ կրելով։

ԹՕՔԻՕ. — Ռիւդէր կ'ըսէ թէ հաւաստի աղբիւրէ իմացած է որ Ճափոնցիք կատաղի յարձակումէ մը ետք գրաւած են Քուրոբաթքին ամրոցը որ երկրորդ ըլլալով վրայ կը գտնուի Իչանի արեւմտեան կողմը։ Այս դիրքն ետ առնելու համար Ռուսաց բոլոր փորձերը ետ մղուած են։

ՏՐԷԶՏԷՆ. — Ժօռժ Թագաւոր, ցնցղատապէ տառապելով, սեննակէն դուրս չելներ։

…

# ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԷՆ

ՈՒՍՈՒՄՆ. ԽՈՐՀՈՒՐԴԸ իր շաբաթական նիստը գումարեց երէկ Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ և զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով.

1. Մայրաքաղաքիս նախակրթարանաց շրջանաւարտ աշակերտաց և աշակերտուհեաց քննութեանց գնահատման գործողութիւնները աւարտած և պատրաստուած ըլլալով ընդհանուր մէկ վիճակացոյց պատկերը, Խորհուրդը ուշադրութեան առաւ զայն և քննելով մի առ մի իւրաքանչիւր աշակերտի տուած նիշերը, քննութեան մասնակցող 150 երկսեռ աշակերտներէն 15ը անյաջող գտաւ և մնացեալ 135ին որոշեց տալ շրջանաւարտի վկայական։

Այդ աշակերտներն ու աշակերտուհիներն են.

Գումգաբուի Մայր վարժարանէն. — Ներկայացած են քառըսօթը աշակերտ և աշակերտուհի և ամէնքն ալ յաջողած։

Գրիգոր Մ. Տաքէսեան, Կարապետ Ա. Չէօմլէքճեան, Կարապետ Երէցեան, Գեղամ Րէյիսեան, Կարապետ Պոյաճեան, Վահան Ծէվահիրճեան, Գէորգ Տամլամաեան, Հայկ Րէյիսեան, Ռուբէն Տէր-Միքայէլեան, Արմենակ Տէր-Յակոբեան, Յարութիւն Ճէրահեան, Յովհաննէս Գ. Մատթեան, Թորգոմ Պ. Խուլիկեան, Թորգոմ Զանանեան և Պայծառ Յ. Միսկիճեան, Տիգրանուհի Փափազեան, Արշակուհի Հէքիմեան, Նուարդ Պօղաճեան, Վարդանոյշ Յ. Միսկիճեան, Օլկա Աղնաւորեան, Սիրվարդ Յ. Արիկեան, Նազենի Թաթարեան, Նուարդ Գա՛լբաքճեան, Եւտոքսի Ս. Պօղոսեան, Աննիկ Տուտագեան, Մաքրուհի Սարաֆեան, Հայկանոյշ Ճանիկեան։

Գումգաբուի դուրսի վարժարանէն. — Ներկայացեալ հինգ աշակերտաց մէջէն երկուքը անյաջող ելած և մնացեալ երեքը վկայականի արժանի դատուած են, և հետեւեալներն են. — Պօղոս Լուսաբարեան, Տիգրան Յակոբեան և Անոյշ Միսաքեան։

Սամաթիոյ Սահակեան եւ Ն. Վարդունեան վարժարանէն. — Ներկայացեալ …

…

